

Գ. ՀՈՎՆԱՆ «ՆԵԿՐԱՍՈՎԸ ԵՎ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՆ»*

Ռուս մեծ պոետ, ուսուցիչի տներ դեմոկրատի ստեղծագործության և հայ պոեզիայի կապերի ուսումնասիրության բնագավառում ընկ. Գ. Հովնանի այս աշխատությունը առաջին լուրջ գիտահետազոտական փորձն է: Հեղինակը ուշիուշով և մեծ խնամքով քննում է իր հայտնաբերած մի շարք նոր և վերին աստիճանի կարևոր փաստեր նեկրասովի պոեզիայի հայ իրականության մեջ դատած արձագանքների, նրա ունեցած խորը ազդեցության վերաբերյալ, որը կրել են հայ գրականության շատ ականավոր ներկայացուցիչները՝ սկսած անցյալ դարի 50—60-ական թվականներից: Գ. Հովնանը առաջին անգամ հրապարակում է այնպիսի նյութեր և տվյալներ նեկրասովի պոեզիայի և հայ գրողների կապերի մասին, որոնք առաջին անգամ են հայտնի դառնում ոչ միայն լայն ընթերցողին, այլև հայ գրականության պատմությանը, ուսուցիչի կուլտուրական կապերի հարցով հետաքրքրվողներին, ինչպես օրինակ, Բաֆֆու, Հ. Հովհաննիսյանի, Պ. Աղամյանի, Քուչերյանի և այլ հայ կուլտուրական և գրական գործիչների մեծ հետաքրքրությունը դեպի նեկրասովը, նրա պոեզիայի օգտագործումը հայ առաջավոր մարդկանց և պոետների կողմից հայ իրականության համար հրատապ սոցիալ-քաղաքական և ազգային խնդիրներ լուծելու նպատակով: Ինչպես երևում է հեղինակի մեջբերած փաստերից և այդ փաստերի վերլուծումից, նեկրասովը, իրոք, հսկայական ազդեցություն է գործել հայ ուսուցիչի մտքի զարգացման վրա: Նեկրասովի պոեզիան, նրա սոցիալական հուժկու ընդհանուր անարդարության և ճնշման դեմ ոգեշնչել է հայ պոետներին: Նեկրասովի պոեզիայի այդ բացառիկ ճանաչումը հայ մտավորականության առաջավոր ներկայացուցիչների շրջանում հեղինակը ապացուցում և ամրապնդում է բազմաթիվ ուշագրավ փաստերով:

Գրքի ներածական գլխում հեղինակը տալիս է կարևոր տեղեկություններ ուսուցիչի մեծ բանաստեղծ, «ժողովրդի թախծի և վշտի հանճարեղ երգիչ» նեկրասովի մասին, մեջ բերելով նրա ամենամոտիկ գործակից և գաղափարակից ուսուցիչի ուսուցիչ-դեմոկրատ Ջերնիշևսկու գնահատականը, որով նա արտահայտում է իր ջերմ սերը և հիացմունքը նեկրասովի հանդեպ: Ներածական այս մասը կարևոր է հայ ընթերցողի համար, բովանդակելով կենսագրական համառոտ տվյալներ Ն. Ա. նեկրասովի մասին, ևս առավել կարևոր է այն հայ ընթերցողին, որը գտնվելով մեր երկրի սահմաններից դուրս, անմիջական հնարավորություն ունի դիմելու սկզբնաղբյուրներին և ծանոթանալու ուսուցիչի պոեզիայի ամենահուշակավոր ներկայացուցիչներից մեկի կյանքին և գործունեության վերաբերող գրականության հետ կենսագրական այդ համառոտ գծերը պարզում են նրա համար այն հսկայական դերը, որ կատարել է նեկրասովի պոեզիան ուսուցիչի իրական-

* Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1956, 353 էջ:

նույն ժամանակ հանդիսանում են նախադրյալներ հիմնավորելու այն նշանակությունը, որ ունեցել է Նեկրասովը անցյալում հայ առաջավոր և ռևոլյուցիոն տրամադրություններով համակրված մտավորականության շրջանում:

Գրքի հիմնական մասը Վ. Ա. Նեկրասովը և հայ պոեզիան» զուգահեռ է, որտեղ հեղինակը հետևում է այն ակունքներին, որոնցից բխել են անցյալ դարի 50-ական թվականներից սկսած առաջավոր, դեմոկրատական ուղիները գաղափարները հայ գրականության մեջ: Դ. Հովհաննիսյանը ընդգծում է որ Նեկրասովի պոեզիան նշանակալից դեր է կատարել և ստեղծագործական ազդեցություններ է եղել Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Ս. Շահազիզի և 60-ական թվականների այլ հայ պոետների համար: Սխտ բնորոշ է, որ Նեկրասովի «Պոետն ու քաղաքացին» բանաստեղծության երկու տողը թանաստեղծ դու կարող ես չլինել, բայց քաղաքացի լինել դու պարտավոր ես» Ս. Շահազիզի մոտ դարձել է Վեյսի քաղաքացի, և ապա պոետ» հայտնի նշանաբանը, միաժամանակ հանդիսանալով, ինչպես գրում է հեղինակը Վ. Ա. Նեկրասովի մասին 50—60-ական թվականների պոեզիայի համար: Այստեղ, հարկավ, խոսքը վերաբերում է նաև հայ առաջավոր դեմոկրատական պոեզիային, որի լավագույն ներկայացուցիչները խորապես կրել են Նեկրասովի պոեզիայի դադափարական ազդեցությունը: Ռ. Պատկանյանը շատ իրավացի կերպով հայ կլասիկ պոեզիայի մեջ վաստակել է քաղաքացի-պոետի անունը: Նշելով այս փաստը հեղինակը իրավացիորեն արձանագրում է հայ գրականության պատմության մեջ ընդգծված այն դրույթը, թե Ռ. Պատկանյանը ստեղծագործական ներշնչումներ է ստացել Նեկրասովի պոեզիայից, և որ Պատկանյանի անունը որպես բանաստեղծի վաղուց «հայ գրական քննադատությունը կապել է Նեկրասովի անվան հետ» (էջ 52): Այս իրողությունը անկասկած արժանի է ավելի խոր ուսումնասիրությունների և հատուկ մենագրական հետազոտություն-պարզելու համար այն դերը, որ կատարել է Նեկրասովի պոեզիան Ռ. Պատկանյանի ստեղծագործական աճման և ձևավորման մեջ: Օրինակ խիստ հետաքրքրական կլիներ լուսարանել այն կապը, որ կա քաղաքացիական պոեզիայի ժանրերից մեկի՝ ռոմանտիկ ֆելյետոնի վարպետ Նեկրասովի մի շարք սատիրական բանաստեղծությունների և Ռ. Պատկանյանի հայտնի ռոմանտիկ ֆելյետոնների («Մայրաքաղաքում կրթած հայ երիտասարդ», «Մայրաքաղաքում կրթած հայ աղջիկը» և այլն) միջև: Հեղինակը նշում է Նեկրասովի հետևիլությունը կամ նմանությունը գրված այն բանաստեղծությունները, որոնց մեջ Պատկանյանը արժարժում է հայ իրականության հարցերը:

Հայն ընթերցողի համար վերին աստիճանի ուշադրավ և հետաքրքրական փաստ է հայ մեծ վիպասան Բաֆֆու ստեղծագործության սկզբնական շրջանում գրած «Սառած պոետի սերտ կապը Նեկրասովի «Սառած պոետի հետ, որի ազատ փոխադրությունն է Բաֆֆու «Սառած» տեղափոխված հայկական միջավայր: Բաֆֆու «Իայակ» բանաստեղծությունը, գրված է 1872 թվականին «Песня Еремушке» բանաստեղծության ազատ թարգմանությունն է, որի մեջ Բաֆֆին ուսումնասիրել է բանաստեղծի հետևողությունը սրուշակի պայքարի կոչ է անում հին, փտած օրենքների, նախադասարարների, անարդարության դեմ և դիմում է երիտասարդ նոր սերնդին, որ նա վերջի շղթան ճանաչողական կյանքի» ու զարկ տա հայրե-

նիքի առաջադիմություն» (էջ 73): Այս բոլոր փաստերը խիստ հատկանշական են և գալիս են մի կրկին անդամ ընդգծելու այն հսկայական դերը, որ կատարել է շփումը ոուս առաջավոր կուլտուրայի և ուսուցիչին դեմոկրատական մտքի հետ հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացման և հայ ժողովրդի ազգային կուլտուրայի, գրականության և արվեստի զարգացման գործում:

Հեղինակը կանգ է առնում նաև այն կապերի վրա, որ ունեցել են հայ կլասիկ գրականության մի շարք այլ ականավոր ներկայացուցիչները (Ղ. Աղայան, Հովհ. Հովհաննիսյան, Հովհ. Թումանյան, Ա. Ծատուրյան և ուրիշները) նեկրասովի պոեզիայի հետ: Ոչ նվազ ուշագրավ է այն փաստը, որ հայ մեծ ողբերգու դերասան Պետրոս Աղամյանը որպես բանաստեղծ զգալի չափով կրել է նեկրասովի պոեզիայի ազդեցությունը: Աղամյանի վրա այնքան ուժեղ տպավորություն է գործել նեկրասովի «Դորրոյուրուօի հիշատակին» բանաստեղծությունը, որ նա թարգմանել է այն և արտասանել գրական-գեղարվեստական երեկոներին: Աղամյանի այդ թարգմանությունը լույս է տեսել նրա մահից 19 տարի հետո 1903 թվականին «Ծարագ» ժուռնալում: Մեծ դերասանը «հայացրել է» նեկրասովի բանաստեղծությունը, սակայն հարազատ է մնացել բնագրի ոգուն:

Դ. Հոֆմանի աշխատությունը արժեքավոր ներդրում է ոուս և հայ ժողովուրդների դարավոր կուլտուրական կապերի ուսումնասիրության բնագավառում, միաժամանակ ընթերցանության հետաքրքիր նյութ լայն լինթերցողի համար, գրված լինելով սահուն և մատչելի լեզվով:

Կարելի է մի դիտողություն անել, որը վերաբերում է գրքի կառուցվածքին և վերնագրին: Գ. Հոֆմանի աշխատության թեման ավելի է լայն, քան նշված է վերնագրում, փաստորեն գրքի բովանդակությունը հանգում է «նեկրասովը և հայ իրականությունը» թեմային, գրքում կա նույնիսկ մի գլուխ «նեկրասովը և հայ արվեստը» որը չի առնչվում հիմնական թեմային, եթե դա համարենք «նեկրասովը և հայ պոեզիան»:

Հեղինակը մեր կարծիքով գրական ազդեցության հարցը քննարկելիս, պետք է ավելի ընդգծեր, որ հայ պոետները խորապես ընկալելով նեկրասովի պոեզիայի ներքին խոր բովանդակությունը և մարտական ոգին իրենց սեփական պոետիկական ստեղծագործություններում երբեք չեն կտրվել ազգային ակունքներից և արմատներից: Սակայն հիմնականում Գ. Հոֆմանը ճիշտ է լուծել գրական ազդեցության խնդիրը: Չափազանց հետաքրքիր է նաև նեկրասովի երկերի թարգմանության նվիրված գլուխը, որը շատ հանդամանալից կերպով տալիս է ոուս մեծ բանաստեղծից կատարած հայերեն թարգմանությունների պատմությունը մինչև մեր օրերը: Պակաս հետաքրքրական չէ նեկրասովի բանաստեղծությունները «հայացնելու» փաստերին վերաբերող մասը: Այդ բոլորը ցույց է տալիս, թե որքան խորն է թափանցել նեկրասովը հայ պոետների և առաջավոր մտավորականների շրջանում:

Սրանք կարևոր փաստեր են հայ գրականության պատմության համար, ուստի և Գ. Հոֆմանի աշխատությունը, նվիրված նեկրասովին, արժեքավոր ներդրում է մեր եզրայրական ժողովուրդների կուլտուրական կապերի ուսումնասիրության ասպարեզում:

Վ. ԹԵՐԶԻԲԱՇԵԱՆ

